

- 19 Յետ տօնի ծըննդեան նա երթալ խորհէր,
 Ի Հրոօմ՝ քաղաք՝ ուր որոշեալն էր,
 Ապրիլ յանդորրու որչափ հընար էր,
 Ի՛ անդր իսկ մեռանիլ եթէ կամք Տեառն էր:
- 20 Այլ ով անքրննին արբամագրութեան,
 Ի՛ անհասանելի երկնից հաճութեան,
 Որ ընդդէմ Սարգսի ւ՛ այլոց բսպասման՝
 Գիպիլ որոշէր աստ նորին վաղջան:
- 21 Զի յետ աւուրց ինչ խօթացեալ նորուն՝
 Յայտնիւր ի նըմին ախտ ինչ հին թագուն,
 Որ ուղորդութեան շարժմամբն իսկոյն՝
 Սաստկացեալ՝ ճընշէր ըղկարիս մարմնոյն:
- 22 Եւ թէպէտ նոյն ախտ անդէն դիւրանայր
 Ի ձեռքն դեղոց կիսառողջարար,
 Այլ յետ խուն աւուրց դարձեալ զայրանայր,
 Ի՛ դժ բսպեղանեաց այնմ ոչ շատանայր:
- 23 Ուստի օր քան զօր ախտն աճեալ կարի,
 Յամին յաջորդի ի փետրրվարի
 Առ փոխել զօդ տան բստ տածչաց բանի,
 Զայլ ինչ յարկ կալնոյր յայսմիկ քաղաքի:
- 24 Այլ անդէն նաեւ հիւանդութիւն իւր
 Օր բստ օրէ միշտ խուճապմամբ աճիւր
 Որոյ տեսեալ զանձն ի վըտանգ տրխրիւր
 Ի՛ առ ունիլ բարի վաղջան պատրաստիւր:
- 25 Ապա իսկ եւ իսկ զըղջմամբ անքատակ
 Սուրբ Հաղորդութեան առնոյր ըղթողակ,
 Ընդ վերջին օժման ըղձիւ հոգունակ,
 Արարեալ նաեւ շեշտիւ զիւր կըտակ: